Հավելված 1
Կադաստրի կոմիտեի ղեկավարի
«09» 09 2020 թ.
N 215-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գնումների կազմակերպման բաժնի կանոնադրական խնդիրներից բխող, աշխատանքի ծավալների ավելացմամբ՝ մասնավորապես գնումների կազմակերպման որակի բարձրացմանը միտված ռազմավարության ու ծրագրերի մշակման, նոր ստեղծվող Գեոմատիկայի կենտրոնի գնումների գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ և բաժնի գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ:

Բաժնի աշխատանքային ռեսուրսներն ամբողջությամբ ներգրավված են հետևյալ աշխատանքներում.

- Կոմիտեի գործառույթների իրականացման համար գնման գործընթացների կազմակերպման,
- հրավերի պատրաստում հայերեն և ռուսերեն լեզուներով (ներառյալ տեխնիկական բնութագրերը)
- Ընթացիկ տարում կազմում է հաջորդ տարվա գնումների պլանը:
- Կազմում է գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի, գնումների համակարգող ձևավորելու մասին հրամանի նախագիծը:
- Գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմում:
- PPCM համակարգի իր անձնական էջով լրացնում և բաժնի պետին հաստատմանն է ներկայացնում գնման ընթացակարգերի հաշվետվությունները, գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերը:
- իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:
- Որպես գնումները համակարգողը գնահատում է գնման հայտի կազմման համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Նոր ստեղծվող Գեոմատիկայի կենտրոնի գնումների գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով աշխատանքների ծավալի ավելացումը: Փորձագետը պարտավոր է ապահովել նաև ԵԱՏՄ պայմանագրով ստանձնված պարտավորությունների շրջանակում պահանջվող փաստաթղթերի կազմումը ռուսերեն լեզվով:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիրը կնքելու պահից սկսած մեկ տարի ժամկետով:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է.

- Փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում:
- Կոմիտեի աշխատանքային ընթացակարգերի իրականացման նորարարական լուծումներ:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձագետը սույն ծրագրով, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարված աշխատանքների վերաբերյալ երեք ամիսը մեկ անգամ, մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 20-ը անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- ՀՀ քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- իր լիազորություններին վերաբերող անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն,
- թիմային աշխատանքի ունակություն,
- հաշվետվությունների, փաստաթղթերի կազմման և ներկայացման ունակություն,
- տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,
- բանակցություններ վարելու կարողություն,
- կոնֆլիկտների կառավարում,
- փոփոխությունների կառավարում,
- ժամանակի կառավարում,
- ծառայությունների մատուցում և կառավարում (քաղաքացիների սպասարկում)
- Գնումների մասին ՀՀ օրենսդրության իմացություն